77. ԿՆԳԱՆ ՇԱՌ

Կէղնի չէղնի, կնիկ մի կէղնի։ Օր մի օրերուց կելնի կէրթա շուկեն։ Տեսնի օր էն դհեն փաշեն, կաղին, մուֆթին զրուցելեն կանցնին։ Մեկ մեկին կասա.—Աստված կնգան շառեն աղատ էնա։

Մեկն էլ կասա.—Կնգան շա՞ռն ի՛նչ ա, մարթ կնգան շառեն վախենա։

Կնիկ կխասկնա էս խոսք։ Կելնի կուքա ուր տուն, իրկան կասա.— Հ'էսօր քեզի լավ մի ճամրխու խաց պատրաստեմ, հ'ելիր գնա գեղ մի, քանի մ'օր մացիր։ Սորա ես քեզի շուլար կճամփիմ հ'ելի՛ր արի՛, ինչ օր, օր ես ուղեցի։

Կնիկ հ'ելավ իրիկ ճամփու տրեց, քնաց։ Կնիկ հ'ելավ քնաց փաշի տուն։ Կնիկն էլ էնպես դինք շիներ ա, չուտող, չխմող իշկա կնիկ, թամաշա էնա։

Քնաց կանավ փաշի հ'առճև, ասաց.—Փաշա աֆանդի, ես աչքուստ չունիմ, ընձի ապրուստի յոլա խան։

Փաշեն տեսավ գեղեցիկ դեմք մի կա ենգան վերեն, սիրտն ավիրվավ, հ'ելավ քանիմ օսկի տվեց կնգան։

Կնիկ ասաց.—Փա՛շա, եթե կարելի յա, հ'էսօր հ'իրիկուն արի՛ մեր տուն։

Փաշեն խոսք տվեց էրթալու։ Կնիկ թողեց տնեն դուրս հ'ելավ, քնաց կազու տուն։

Կազուն էլ ասաց.—Կազի աֆանդի, էսչափ ժամանակ էղավ օր իմ իրիկ քացեր ա կուրբաթ, մկա մացեր եմ խեղճ, ո՛չ տեր ունիմ, ո՛չ տիրական, մեկ քանի փարա տաս տանիմ մխսիմ։

Կազին տաս օսկի տվեց կնգան, առավ շեր թալեց սորա, ասաց կազուն.— Հ'էսօր հ'իրիկուն արի՛ մեր տուն։

Կազին ուրախցավ, ասաց.—Շատ աղեկ։

Կնիկ էտտեղից դուրս հ'ելավ, քնաց էս անքամ մուֆթու տուն, ասաց մուֆթուն.—Աֆանդի, ես խեղճ եմ, ինձի մեկ քանի փարա տու, տանիմ մխսիմ։

Մուֆթին հ'ելավ մեկ քանի փարա տվեց կնգան, կնիկ ասաց մուֆթուն.— Հ'էսօր օր ես քեզ մսաֆըր կանչեմ իմ տուն, չի՞ գաս։

Մուֆթին ասաց.—Խա՛, կուգամ, ընչի՞ չի գամ։

Կնիկ էտ տեղն էլ թորկեց դուրս հ'ելավ, չէ՞ օր էտ իրեք մարդեկաց մոտեն պավականի չափ փարա առավ։ Իճավ քնաց շուկեն, տան խամար ամենան պակասութեն առավ, տվեց համլի մի շալակ, բերեց ուր տուն։ Լա՜վ մի սարքեց։ Մնաց մինչև հ'իրիկվան ատեն, տեսավ օր փաշեն էկավ տուռ զարկեց։ Կնիկ հ'ելավ, քնաց տուռ պացեց, փաշեն ներս առավ, էկավ նստավ։ Սկսան մեկ էրկու սհաթ զրուցել։ Կերան, խմեցին։

Փաշեն ասաց կնգան.—Կնիկ, հերիք է, հ'ելիր պառկինք։

Կնիկ ասաց.—Փաշա՛ աֆանդի, դեռ նոր էկար, կեցի՛ քիչ մի կզրուցենք, սորա կելիմ կպառկիմ։ Հ'որի՞ն աշալա[1] կէնես։

Մնացին սհաթ մի, տեսան օր տուռն զարկելու ձեն կուքա։

Փաշեն ասաց կնգան.—Էտ ի՞նչ տուռն ձեն ա, իսա զախ էս տեղ ո՞ր պիտի գա։

Կնիկն ասաց.— Կարելի յա, իմ իրիկն ա, կարբութենից էկավ։

Փաշեն ասաց.—Կնի՛կ, օր քու իրիկ էղնի, ես իմա՞լ էնիմ։

Ասաց.— Մը՛ վախենար, էտոր ճար կէղնի։ Քեզի կմտուցեմ սընդկի մեշ, կպախեմ։ Սորա կէրթամ, իրիկ ներս կպերեմ։ Մկա նեղեցուկ ա, ճամփուց կուքա, շատ չնստիր, կելի, կպառկի։ Քուն օր քնաց վերեն, ես կելիմ ճրաք կմերիմ, քեզի սընդկեն կխանեմ, կպերեմ մոտս ի։

Փաշեն ասաց.—Էտ տեսակ բա՛ մի կէղնի՞։

Տարավ փաշեն պախկվեցուց, հ'ելավ քնաց տուռ պացեց, մուֆթին ներս առավ, էկավ։

Էկան նստան, մուֆթին ասաց.—Տուն չհասկնե՞ր տուռն ձեն, էսքան ժամանակ էկեր է, կաներ է տուռ, կտփի, չհա՞սկըներ։

Կնիկ ասաց.—Պառկիր ի, քիչ մի ննշացի։

Հ'ելան ըշտա չայ տրեցին, կերան խմեցին. էտ զրուցելու մեջ-

---

1 Շտապել (Ս. Բ.)։

տեղ փաշեն սնդկի մեջ մուֆթու ձեն կխասկնա։ Ինքն իրեն կասա՝ «էս մուֆթու պան ու քործ ի՛նչ էր, էկավ էստեղ»։

Էտ տեսակ կմնա, մուֆթին կնգան կասա.—Հ՚ելիր պառկինք։

Կնիկ կասա մուֆթուն.—Հ՚որի՞ն աջալա կէնես, նոր էկար, կիջեր հ՚երկեն ա, մեղի քիչ մը կզրուցենք, սորա կելինք, կպառկինք։

Մացին կես սհաթ մի վերհ, տեսան օր տռան զարկելու ձեն կուքա։

Մուֆթին կխարցուցա.—Կնի՛կ, էս ո՞ր պիտի էլնի։

Կնիկ կասա.—Կարելի յա, իմ իրիկն ա։ Էս չափ ժամանակ էղավ օր գացեր էր կուրբաթ, հ՚էսօր հ՚ելավ, էկավ։

Մուֆթին կասա.—Ապա քու իրիկ էլավ, իմա՞լ էնեմ ես։

Կասա.—Քեզի կտանիմ, կմտցեմ սնդկի մեջ, պախեմ։ Իմ իրիկն օր ներս էկավ, նեղեցուկ ա, շուտ կելի պառկի, ես էն ժամանակին կելիմ քեզի սնդկեն խանեմ, տանիմ իմոտսի։ Ի՞նչ պիտի խասկնա իմ իրիկ, թե էստեղ օտար մարթ էկեր ա, կամ չէկեր ա։

Կնիկ հ՚ելավ, մուֆթին տարավ մտուց սնդկի մեջ, գնաց տուռ պացեց, տեսավ օր կազին էլ էկավ։

Կաղին ասաց կնգան.—Տնա՛վեր, ի՞նչ կէներ, ես մեռա՛ տուռ զարկելով։

Էկան, էրկուք մեկտեղ նստան, սկսան սարեն, ձորեն զրուցել։ Մացին քիչ մի, պերեցին գենա կեր ու խում էրեցին, փրցան, կազին ասաց կնգան.—Հ՚ելիր պառկինք։

Կնիկ ասաց կաղուն.— Կտզի աֆանդի, հ՚որի՞ աջալա կէնիս։ Հալա դու նոր էկար, աջալա մի՛ էներ, քյեֆով կելինք, կպառկինք։

Կնիկ սարեն ձորեն զրուցեց, տեսավ դինա դուռ զարկեցին։

Կաղին ասաց.—Էսի ո՞ր կէղնի։

Կնիկ ասաց.—Կարելի յա իմ իրիկն ա, կարիբութենից էկավ։

Կաղին ասաց.—Զուր հ՚էսօր քու իրիկ չէկեր էր, հ՚էսօր նո՞ր պիտի գա, էս էլ իմ էղբլեն[1] էր։

Կնիկ ասաց.—Խոսք մի՛ էներ։ Քեզի տանիմ մտցեմ սնդկի մեջ, օր իմ իրիկն էղավ, նեղեցուկ ա, շուտ կելի պառկի, ես էն ժամանակին կելիմ քեզի կառիմ քովս ի։

Կնիկ կազին տարավ, մտուց սնդկի մեջ, վազավ, գնաց տուռ պացեց։ Տեսավ օր իրիկ ներս մտավ։

Էկան նստան, իրիկ կնգան մոտեն հարցուց.—Կնիկ, ի՞նչ կա, ի՞նչ չկա։

---

1 Բախտից (Մ. Բ.)։

Կնիկն էլ ասաց.—Իրիկ, դուն սարեն ձորեն կուքաս։

Սկսան քիչ մի զրուցել։ Հ՝ելան պառկան։ Լուսուն էղավ, կնիկ իրիկան ասաց.— Գնա շուկեն իրեք խատ համալ պեր։

Իրիկ ասաց կնգան.—Պարին էղնի, ի՞նչ դավին ա, իրեք խատ համալ ի՞նչ պիտի էնես, կնի՛կ։

Կնիկ ասաց.—Ինչո՞ւտ պետք, դուն գնա՛ պե՛ր։

Իրիկ իճավ, քնաց շուկեն, առավ իրեք խատ համալ, էկավ։ Տվեց ամեկու շալակ մեկ-մեկ սնդուկ։

— Տարեք,—ասաց,—էսի մեյդան, ծախենք։

Վերցեցին մեկ-մեկ շալքներ, կնիկ հ՝ընգավ էտոնց խետ, քնաց։

Մեկ համալ նեղեցեր էր, սնդուկ տարավ տրեց քարի վերեն խանգ պիտի առնի։ Մեկ էլ կտեսնի համալ, ձեն կուգա։

Կասա.—Ինձի մը տա՛նիր, թո՛ղ հ՝ելնիմ սնդկեն դուս, քեզի ի՞նչ կուզես տամ։

Համալ տեսավ օր սնդկի մեջեն զրուցելու ձեն կուգա, զարմացավ, ասաց՝ «Տղա, էս ի՞նչ մարթ է էսոր մեջ»։

Սորա կազին էնտեղ խասկցուց համլին, ասաց.—Ես կազին եմ, ինձի սնդկով տար մեր տուն, ի՛նչ հ՝ուզես զէն կուտամ։

Կնիկ օր համլու հետն էր, չկրցավ տարեր էր։ Իրեք սնդուկ տարան, դրեցին շուկի մեջ։

Կնիկ քնաց, դալալ[1] մի բերեց.—Խա՞ն,—ասաց,—էսոնք մաղաթ[2]։

Դալալն էկավ բռռաց.—Ամեկ սնդուկ հիսուն օսկի։

Մուշթրիք էկան վերեն, խանեցին մինչև խարիր օսկի՝ ամեկ սնդուկ։

Եփ օր հարաճ էրեց[3], կնիկ առնողներուն ասաց.— Իմ ապրանք ձեր հ՝առեճ օր կծախեմ, իմ ապրանք շատ կարելի յա խոզ էլավ, դուք սիրով, սուտով կընդունե՞ք։

Առնողներն էլ ասեցին.— Մեր էղբալ ինչ օր էլավ, առեր ենք, քացեր ա։ Կամ խոզ պիտի էլնի, կամ օսկի։

Կնիկ տարցավ ասաց.— Մացեք, սնդկներու բերան բանամ, իշկեցեք թե ի՞նչ կա մեջ։

Պացեց սնդկներու պերընեբ։ Ժողովուրթ տեսավ օր փաշեն սնդկի մեջ տրուկ։ Զարմացին, ասին.—Էս փաշեն հ՝որի՞ն էկե, մտե

---

1 Մունետիկ (Ծ. Բ.)։

2 Աճուրդ (Ծ. Բ.)։

3 Երբ որ վերջը եկավ (Ծ. Բ.)։

սնդկի մնչ։ Հանցանք մի, յախոդ մեխք մի քործեր ա[1]։ Մեկի բերան էլ պացին, տեսան կազին։ Մեկի բերան էլ պացին, տեսան մուֆթին։ Ժողովուրթ հարցուց կնդան մոտեն.— էս ի՞նչ պատնառ ա։

Կնիկն ասաց.—Ես տասն օր հ՚առեմ իճա շուկեն, կէրթի ճամբախ, էս իրևք մարթ ինձի ռաստ էկան. իրարու կասեն թե՝ «Կնգան շառէն մարթ հեռու պետք ա մնա»։ Մեկն էլ կասեր թե՝ «Կնգան շառ ի՞նչ ա, օր մարթ վախենա»։ Ես էսոնց խոսք խասկցա, ինձի դեմ էրևաց, էս տեսակ բան էրեցի էսոնց գլուխ։

Դ՚ելնք դնացեք ձեր մարտուն խավնեցեք, թե ի՞նչ խաղցավ ձեր գլուխ։

---

1 Կամ մի մեղք է գործել (Ծ. Բ.)։